ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2026/ԱԽ-48

ք. Երևան « » 2026 թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Տ. Ենոքյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էմմա Հովհաննիսյան» Ա/Ձ-ն, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում սննդի մատակարարման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը

ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1 912 550 (մեկ միլիոն ինը հարյուր տասներկու հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 29-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. *ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ*

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են նաև մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև 13.01.2026 թվականից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի զանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	*ԿԱՏԱՐՈՂ*
ՀՀ ներքին գործերի նախարարություն	*ԿԱՏԱՐՈՂ*
ք. Երևան, Նալբանդյան 130	*« Էմմա Հովհաննիսյան Միխթարի » Ա/Ձ*
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	*ՀՀ, ք. Երևան, Կուրղինյան փ.13շ,*
Հ/Հ 900011042471	*Հ/Հ 220098355724000*
ՀՎՀՀ 02882913	*ՀՎՀՀ 28076277*
Հեռ. 010 59-67-89	*Էլ. Փոստ: emma.hovhannisyan1998@mail.ru, Հեռ. 091670610*
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am	

Digitally signed by HOVHANNISYAN EMMA 7803980368
Date: 2026.07.15 12:14:06 AMT

_____ *Տ. Ենոքյան*	_____ *Է. Հովհաննիսյան*
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /	*/տնօրեն/*
(ստորագրություն)	
Կ.Տ	*Կ.Տ*

Ստորագրող
ՏԻԳՐԱՆ ԵՆՈՔՅԱՆ
3408840229

2026-07-15 17:16:33 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« » 2026թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2026/ԱԽ-48 ծածկագրով պայմանագրի

*ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	*գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)*	*տեխնիկական բնութագիրը*	*չափման միավորը*	*ընդհանուր գինը/ՀՀ դրամ*	*ընդհանուր քանակը*	*մատուցման*	
						հասցեն	*Ժամկետը***
1	*սննդի մատակարարման ծառայություններ CPV 55521300/5*	*Ըստ հավելված 1.1-ի*	*դրամ*	*1 912 550*	*1*	*Ըստ հավելված 1.2-ի*	*Դրույթները սահմանվում են 13.01.2026-28.02.2026թթ ժամանակահատվածում*

Գնային առաջարկը ներկայացնել մեկ միավորի համար գների համախառն /գումար/ տեսքով

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Ձերբակալվածներին պահելու վայրերում սննդի մատակարարման ծառայությունների

Ձեռք բերվող ծառայության նկարագիր
Ձերբակալվածներին պահելու վայրերում անվճար սննդի մատակարարման ծառայություններ, համաձայն ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 30-րդ կետի և ՀՀ կառավարության <<Ձերբակալվածներին պահելու վայրերում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու նվազագույն չափաբաժինները սահմանելու մասին>> 15.05.2003թ. թիվ 587-Ն որոշման. *- Ճաշերը պատրաստվում են ըստ շաբաթվա օրերի՝ համաձայն ճաշացուցակի, որը հաստատվում է երկկողմ և կազմում է պայմանագրի մաս՝ հավելվածի տեսքով:* *- Պատվերն իրականացվում է պատվիրատու ստորաբաժանման ներկայացուցչի կողմից հայտի տեսքով, որը լրացվում է էլեկտրոնային եղանակով, հեռախոսագրի միջոցով, ֆաքսի եղանակով կամ առձեռն թղթային տարբերակով:* *- Պատվերի ընդունման կատարման ժամկետների միջև տարբերության նվազագույն չափը պետք է կազմի 8-ից 12 ժամ:* *- Պատվերի կատարումն իրականացվում է կատարող կողմի ներկայացուցչի կողմից պատվիրատուի ներկայացուցչին փաստացի պատվերը հանձնելու միջոցով և ընդունման-հանձնման արձանագրություն /հանձնման հաստատված նմուշի/ կազմելու եղանակով:* *Վճարումը՝ փաստացի ՁՊՎ-ում պահված անձ-օր քանակով:* *ՀՀ ՆԳՆ ոստիկանության համակարգում գործող ՁՊՎ-ներում 2026թ. փաստացի պահված անձանց վերաբերյալ*

Հ/Հ	*ՁՊՎ-ի գտնվելու վայրը*	*Հասցեները*
1.	*ՀՀ ողջ տարածքում*	*Տես կից ներկայացվող հավելվածում*

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՐԱԿՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Հ/հ	Սննդամթերքի անվանումը	Սննդի նորման մեկ օրվա համար /գրամ/	գումար
1	Հաց	550	230
2	Միս, մսամթերք	90	350
3	Ձուկ՝ առանց գլխի	100	200
4	Ձավարեղեն	100	100
5	Մակարոնեղեն	20	63
6	Բուսական յուղ	20	25
7	Շաքար, Շաքարավազ	40	20
8	Կենդանական յուղ՝ մարգարին	45	90
9	Կաթ /կաթի փոշի/	100 /14.3/	50
10	Թեյ	1	25
11	Բանջարեղեն	250	160
12	Կարտոֆիլ	550	180
13	Աղ կերակրի	8	2
14	Հյութ	100	50
15	Տոմատի մածուկ	3	3
16	Դափնետերև	0.1	2
	ընդհանուր		1550 ՀՀ դրամ
Հղի կանանց, կերակրող մայրերին, անչափահասներին, ինչպես նաև հիվանդներին (բժշկի նշանակմամբ) լրացուցիչ տրվում է.			
17	Բուսական յուղ	20	25
18	Կարագ	25	60
19	Կաթ /կաթի փոշի/	100 /14.3/	50
20	Հավի ձու	1 հատ	65
	ընդհանուր		1750 ՀՀ դրամ

ՇԱԲԱԹՎԱ ՃԱՇԱՑՈՒՑԱԿ

Շաբաթվա օրեր	Նախաճաշ	Ճաշ	Ընթրիք
Երկուշաբթի	Հնդկաձավարով շիլա, Հաց, Թեյ /կաթ/, Շաքար /շաքարավազ/	Բանջարեղենով աղցան, Կարտոֆիլով, լոբով, բրնձով ապուր, Մակարոնով փլավ, Միս շոգեխաշած սոուսով, Հաց, Հյութ	Կարտոֆիլի խյուս, Ձուկ տապակած, Հաց, Թեյ, Շաքար /շաքարավազ/

°ñ»ùß³µÃÇ	Ոսպով, մակարոնով համակցված փլավ, Հաց, թեյ /կաթ/, Շաքար /շաքարավազ/	Բազուկի խավիար, Կարտոֆիլով, սիսեռով, ոլոռով ապուր, Հարիսա՝ հավի մսով, Հաց, Հյութ	Բրնձի շիլա, Ձուկ տապակած, Հաց, Թեյ, Շաքար /շաքարավազ/	
Ձորեքշաբթի	Ոլոռով խյուս, Հաց, թեյ /կաթ/, Շաքար /շաքարավազ/	Լոբով աղցան, Բորշչ՝ թարմ կաղամբով, Փլավ (ՈՒզբեկական), Հաց, Հյութ	Ցորենաձավարի շիլա, Ձուկ տապակած, Հաց, Թեյ, Շաքար /շաքարավազ/	
Հինգշաբթի	Մակարոնով, բրնձով համակցված փլավ, Հաց, թեյ /կաթ/, Շաքար /շաքարավազ/	Վիտամինային աղցան, Կարտոֆիլով, ցորենաձավարով և ոլոռով համակցված ապուր, Կարտոֆիլի խյուս, Միս տապակած սոխեռածով, Հաց, Հյութ	Ռազու՝ հաճարաձավարով, թթու դրած կաղամբով և կարտոֆիլով, Ձուկ տապակած, Հաց, Թեյ, Շաքար /շաքարավազ/	
Ուրբաթ	Ոսպով, բրնձով փլավ, Հաց, թեյ /կաթ/, Շաքար /շաքարավազ/	Վինեգրետ (Խառնախորտիկ), Կարտոֆիլով, ցորենաձավարով, ոսպով, մակարոնով համակցված ապուր, Հնդկաձավարի շիլա, Միս շոգեխաշած սոուսով,Հաց, Հյութ	Կարտոֆիլի խյուս, Ձուկ տապակած, Հաց, Թեյ, Շաքար /շաքարավազ/	
Շաբաթ	Հաճարով և ոլոռով համակցված շիլա, Հաց, թեյ /կաթ/, Շաքար /շաքարավազ/	Կարտոֆիլով աղցան, Կարտոֆիլով, ցորենաձավարով, լոբով, մակարոնով համակցված ապուր, մակարոնով՝ նավաստիական, Հաց, Հյութ,	Ոսպով, բրնձով փլավ, Ձուկ տապակած, Հաց, Թեյ, Շաքար /շաքարավազ/	

Կիրակի	Սպիտակաձավարի շիկա, Հաց, թեյ /կաթ/, Շաքար /շաքարավազ/	Գազարով աղցան, Բորշչ՝ թթու դրած կաղամբով, Փլավ՝ Ուզբեկական, Հաց, Հյութ	Կարտոֆիլի խյուս, Ձուկ տապակած, Հաց, Թեյ, Շաքար /շաքարավազ/

Հավելված 1.2

ՑՈՒՑԱԿ

ՀՀ ՆԳՆ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ների քանակի և գտնվելու վայրի մասին

	Ստորաբաժանման անվանումը	Հասցեն
1	Երևան քաղաքի ՁՊՎ	ք. Երևան, Մ. Խորենացու 162ա
2	Աշտարակ	ք. Աշտարակ, Տիգրան Մեծի 46
3	Արտաշատ	ք. Արտաշատ, Շահումյան 20
4	Մասիս	ք. Մասիս, Բաղրամյան 30
5	Արմավիր	ք. Արմավիր, Աշուղ Ջիվանի 3
6	Վաղարշապատ	ք. Էջմիածին, Կամոյի 15
7	Սևան	ք. Սևան, Դեմիրճյան 8
8	Մարտունի	ք. Մարտունի, Մյասնիկյան 5
9	Գավառ	ք. Գավառ, Սայադյան 91
10	Տարոն	ք. Վանաձոր, Մ. Գոշի 3
11	Թումանյան	ք. Ալավերդի, Թումանյան 3
12	Կոտայք	ք. Աբովյան, Ջորավար Անդրանիկի 5
13	Նաիրի	ք. Եղվարդ, Շիրակի 2
14	Հրազդան	ք. Հրազդան, Վանատուր թաղ.Հայ Ֆիդայիների փ. 1
15	Մուշ	գ. Գյումրի Շիրակացի 19
16	Կապան	ք. Կապան, Երկաթուղայինների 4
17	Գորիս	ք. Գորիս, Նարեկացու 3
18	Մեղրի	ք. Մեղրի, Մելիք Օհանջանյան 3
19	Իջևան	ք. Իջևան, Երևանյան 13
20	Նոյեմբերյան	ք. Նոյեմբերյան, Բարեկամության 4
21	Տավուշ	ք. Բերդ, Լևոն Բեկ 12
22	Եղեգնաձոր	ք. Եղեգնաձոր, Միկոյան 18

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
ՀՀ ներքին գործերի
նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-67-89
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

_____ *Տ. Ենոքյան*
/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /
(ստորագրություն)
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
« Էմմա Հովհաննիսյան Մխիթարի » Ա/Ձ
ՀՀ, ք. Երևան, Կուրղինյան փ.13շ,
Հ/Հ 220098355724000
ՀՎՀՀ 28076277
Էլ. Փոստ:
emma.hovhannisyan1998@mail.ru, Հեռ.
091670610

Digitally signed by HOVHANNISYAN EMMA 7803980368
Date: 2026.07.15 12:14:34 AMT

_____ *Է. Հովհաննիսյան*
/տնօրեն/
Կ.Տ

Հավելված N 2
« » 2026 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄՀԾՁԲ-2026/ԱԽ-48 ծածկագրով պայմանագրի

*ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	55521300/5	Սննդի մատակարարման ծառայություններ							1 912 550	1 912 550	1 912 550	1 912 550	1 912 550	1 912 550	1 912 550

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ներքին գործերի
նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-67-89
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

_____ Տ. Ենոքյան
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
ԿԱՏԱՐՈՂ
« Էմմա Հովհաննիսյան Մխիթարի » Ա/Ձ
ՀՀ, ք. Երևան, Կուրղինյան փ.13շ,
Հ/Հ 220098355724000
ՀՎՀՀ 28076277
Էլ. Փոստ:
emma.hovhannisyan1998@mail.ru, Հեռ.
091670610

_____ Է. Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« » 2026 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2026/ԱԽ-48 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	*Պատվիրատու*
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	*գտնվելու վայրը* _____
հհ _____	*հհ*_____
հվհհ _____	*հվհհ*_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	*Մատուցված ծառայությունների*							
	անվանումը	*տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը*	*քանակական ցուցանիշը*		*կատարման ժամկետը*		*Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/*	*Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/*
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	*փաստացի*	*ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի*	*փաստացի*		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց *Ծառայությունն ընդունեց*

ստորագրություն	ստորագրություն
ազգանուն, անուն Կ.Տ.	ազգանուն, անուն Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2026 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2026/ԱԽ-48 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և -ի Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. -ին կնքված N պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	*Ընդունեց* *հայտը նախապատրաստող ներկայացուցիչ՝*
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
ստորագրություն	ստորագրություն

Հավելված N 4
« » » 2026 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2026/ԱԽ-48 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. -ի և -ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.